Ակնարկ մ'ալ աւանդական վէպերուն ձգելով քանի մը յիշատակութիւններ առաջ բերենք։

Քիւրդեր ու Հայերը, հուժկու, յաղթանդամ և երբեմն ալ այլանդակ Քիւրդին կը կանչեն Խորսо. (հոմանիշ Գորդ = գայլ և Քիւրդ բառերուն)։ Վանեցի Հայեր՝ աշխոյժ, ամրակազմ և քաջ մարդկանց կ'անուանեն Ղորտ, Կորճо, Կոռէճ (գուցէ արմատ բառ՝ Կորդուք, Կորդրիք, Կորճէք երկրին, ու նմանութիւն Քիւրդ բառին)։

Նոյնպէս այս իմաստով կը գործածուի Աժդահա մարդ (որ Աժդահակ բառի կրճատումն է)։

Նշանակելի է նաև ցուցնել անքաղաքավար, կոպիտ ու յափշտակիչ մարդը, իր պարթև ու հայկական կազմին մէջ։ Այսպիսին կ'անուանեն Լօռաս. հաւանաբար Լօռ, Լօռիատանցի, որի մասին նախապէս յիշատակութիւն մը բրած ենք։

Քիւրդերը իրենց ցեղական արժանապատուութիւնը յիշեցնող խօսք մը ունին. «Նէ՞ տիւ Մեր ի» (Չէ՞ որ դուն Մեր ես). «Պօտա Մէրատի չիւնինա» (Բեզ մօտ Մերութիւն չկայ)։ Այս ասացուածը կը գործածեն մէկի անվայել արարքը դատապարտելու համար։

Այս գործածութեան մէջ Մեր և Մերատի կը նշանակէ քաջ, քաջութիւն, տղամարդի առաքինութիւն, են.։

Մեր բառը տարբեր է Մերs և Մար բառերէն. առաջինը կը նշանակէ մարդ, առաստաձեռն. երկրորդը օձ։ Շատ հաւանական է Մեր ըսելով՝ կը յիշեցնեն իրենց նախահայր Մարերը։

Ժամանակ երբ կը տեսնէ որ աւելի հանգիստ են բանտերի մէջ քան իրենց տունները, զանոնք ասանջելու համար, Կ. Պոլսէն տախտակորդ (թախթա պիթի) բերել կու տայ տուփերով, ու բանտը կը լեցնէ որպէս զի Քիւրդերը տանջուին։ Այս փաշայի համար կ'ըսուի նաև բանակալութեան դէմ խլրտումներու ժամանակ՝ ժողովրդի վրայ յարձակուեր է։ Այս արարքներուն համար նա կը կոչուի Գուռդ, այսինքն գայլ, պատառող, որ պս տուանունի տեղ առնուած է։